ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

28 փետրվարի 2017 թվականի N 6-Ա

,,ՄԱՔՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆ,, ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 16.02.2017թ կայացած նիստում ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականը՝ ''Մաքուր Հայաստան'' ծրագրի շրջանակներում Տավուշի մարզում իրականացվող աշխատանքների նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին

Կ ա ր գ ա դ ր ում եմ.

1. Հաստատել Տավուշի մարզում ''Մաքուր Հայաստան'' ծրագրի շրջանակներում իրականացվելիք միջոցառումների ժամանակացույցը /հավելված1 /:

2. Ծրագիրի միջոցառումները կազմակերպելու և աշխատանքների արդյունքներն ամփոփելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով / հավելված 2/:

3. Մարզում 2017թ. մարտի -ից ''Մաքուր Հայաստան'' ծրագրի շրջանակներում իրականացնել սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

4. Առաջարկել համայնքների, ուսումնական հաստատությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների ղեկավարներին՝

1/ ''Մաքուր Հայաստան'' ծրագրի շրջանակներում իրականացվելիք աշխատանքները պատշաճ կազմակերպելու նպատակով տեղերում ստեղծել համապատասխան հանձնաժողովներ, կազմել և մարզպետարան ներկայացնել իրականացվելիք աշխատանքների ծրագրերը, ապահովել բնակչության լայն շրջանակների մասնակցությունը:

2/ 2017թ. ապրիլի 15 -ը Տավուշի մարզում հայտարարել համամարզային շաբաթօրյակ:

5. Հանձնաժողովի նախագահին.

1/ իրականացված աշխատանքների և առաջացած խնդիրների վերաբերյալ մարզպետի մոտ քննարկելու նպատակով պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն

2/ Ներկայացնել առաջարկություն աշխատանքները լավագույնս կազմակերպած համայնքին, կազմակերպությանը, ուսումնական հաստատությանը խրախուսանքի արժանացնելու համար:

6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Հ. ԱԲՈՎՅԱՆ

2017թ. փետրվարի 28
ք. Իջևան

Հավելված 2

Հաստատված է
ՀՀ Տավուշի մարզպետի
2017թ. փետրվարի 28-ի
թիվ 6-Ա -կարգադրությամբ

Կ Ա Զ Մ

''Մաքուր Հայաստան '' ծրագրի շրջանակներում ՀՀ Տավուշի մարզում իրականացվող միջոցառումների նպատակով ստեղծված մարզային հանձնաժողովի

Մ.Մխիթարյան - Նախագահ, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ ՏԾ ԳՀ վարչության պետ
Գ. Բաղալյան - աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
Լ. Վանցյան - աշխատակազմի առողջապահության և սոց. ապահովության վարչության պետ
Վ. Սուքոյան - աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Կ.Նազարյան - աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Ա.Սարգսյան - աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ
Ս.Գևորգյան - աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ
Գ. Հարությունյան- աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ
Ա. Մելիքսեթյան - աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ
Մ.Մելքումյան - աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
Մ.Ղալումյան - աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

ՀՀ Տավուշի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ս. Դավթյան

Ժամանակացույց

հավելված 1

''Մաքուր Հայաստան '' ծրագրի շրջանակներում << Տավուշի մարզում իրականացվող միջոցառումների

h/h	Միջոցառման անվանումը	Իրականացման ժամկետը	Տարածքը, վայրը	Մասնակիցներ	կատարող	պատասխանատու	ծանոթություն
1	Համայնքներում, կազմակերպություններում և ուսումնական հաստատություններում համապատասխան աշխատանքային խմբերի ստեղծում	Մինչև 3-ը մարտի	Համայնքներ, ուսումնական հաստատություններ, կազմակերպություններ	Բնակչություն, աշակերտներ և ուսանողներ,	Համայնքապետարաններ, ուսումնական հաստատությունների տնօրեններ	Մ.Մխիթարյան, Կ. Նազարյան	
2	Աջակցություն համայնքային հանձնաժողովներին կազմակերպչական աշխատանքներին	մշտական	Համայնքներ, ուսումնական հաստատություններ, կազմակերպություններ	Հանձնաժողովի անդամներ	Համայնքապետարաններ, ուսումնական հաստատությունների տնօրեններ	Հանձնաժողով	
3	Համայնքների տարածքներով անցնող հանրապետական, միջպետական և համայնքային ճանապարհների սանմաքրման աշխատանքների իրականացում	Մշտական	Տավուշի մարզ	Ճան.շահագործման կազմակերպություններ	Համայնքների ղեկավարներ Ճան.շահագործման կազմակերպությունների ղեկավարներ	Մ.Մխիթարյան Ա.Սարգսյան	
4	<<Մաքուր Հայաստան>>ծրագրի շրջանակներում՝ <<Շրջակա միջավայր և բնապահպանություն>> թեմայով ուսումնական հաստատություններում դասընթացների կազմակերպում	2017թ. ընթացքում	Տավուշի մարզի ավագ դպրոցներ, քոլեջներ, ԲՈՒՀ-եր	Դասախոսներ,ուսուցիչներ, ուսանողներ,աշակերտներ	Կ.Նազարյան Ս.Գևորգյան, ուսումնական հաստատությունների տնօրեններ	Կ.Նազարյան Ս.Գևորգյան	

5	''Մաքուր Հայաստան '' ծրագրի շրջանակներում կազմակերպել երթեր մարզի համայնքներում	2017թ. մարտ-մայիս	Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան, Բերդ համայնքներ	Բնակչություն,ուսանողություն, աշակերտներ, հասարակական կազմակերպությունները	Համայնքի և ոստմնական հաստատությունների ղեկավարներ,Հ Կ-ներ	Վ. Ղալումյան Ա.Սանթրոսյան, Կ.Աբազյան, Հ. Մանուչարյան Մ.Մխիթարյան, Կ. Նազարյան	
6	Դպրոցներում էքսկուրսիաների կազմակերպում՝ բնության նկատմամբ խնայողական վերաբերմունք ձևավորելու նպատակով /ջրամբարներ, աղբյուրների ակունքներ/	2017թ. 2-րդ և 4-րդ եռամսյակներ	Մարզի դպրոցներ /Հաղարծին, Աղավնավանք/	Բնակչություն,ուսանողություն, աշակերտներ	Համայնքի և ոստմնական հաստատությունների ղեկավարներ	Մ.Մխիթարյան, Կ. Նազարյան	
7	Մասնակցություն մեծահասակների հետ կամավորական բնապահպանական միջոցառումներին/ծառատունկ, շաբաթօրյակ և այլն/	2017թ. մարտ-մայիս	Մարզի համայնքներ	Մարզի նախադպրոցական ուսումնական հաստատություններ	Նախադպրոցական ոստմնական հաստատությունների ղեկավարներ	Համայնքների ղեկավարներ, Նախադպրոցական ոստմնական հաստատությունների տնօրեններ	
8	Աղբահանության կազմակերպումը ըստ կենցաղային թափոնների /պլաստիկ իրեր, ապակի, թուղթև այլն/	մշտական	Մարզի տարածք	Բնակչություն,ուսանողություն, աշակերտներ	Համայնքապետարաններ	Հանձնաժողով	
9	Շաբաթօրյակի կազմակերպում	2017թ. ապրիլի 15	Մարզի տարածք	Բնակչություն,ուսանողություն, աշակերտներ	Համայնքապետարաններ, ուսումնական և առողջապահական կազմակերպություններ	Համայնքների ղեկավարներ, հանձնաժողով	

10	Ծառատունկի կազմակերպում	2017թ. մարտ-մայիս	Մարզի տարածք	Բնակչություն,ուսանողություն, աշակերտներ	Համայնքապետարաններ, ուսումնական և առողջապահական կազմակերպություններ	Համայնքների ղեկավարներ, հանձնաժողով	
11	Կենցաղային աղբից գետերի հուների մաքրման աշխատանքների կազմակերպում՝ բացառելով դրանց հետագա աղտոտումը	մշտական	Մարզի տարածք	Բնակչություն,ուսանողություն, աշակերտներ	Համայնքապետարաններ	Համայնքների ղեկավարներ, հանձնաժողով	
12	Համայնքներում ինքնաբերաբար առաջացած աղբավայրերի վերացում	մշտական	Մարզի տարածք	Բնակչություն, համայնքապետարանների համապատասխան մասնագետներ	Համայնքապետարաններ	Համայնքների ղեկավարներ, հանձնաժողով	
13	Քաղաքացիական հասարակության շրջաններում քննարկումների ձևավորում՝ շրջակա միջավայրը մաքուր պահելու թեմաներով	մշտական	Մարզի տարածք	ՀԿ-ներ, ուսանողներ, աշակերտներ	Համայնքապետարաններ, ՀԿ-ներ, ուսանողներ, աշակերտներ	Համայնքների ղեկավարներ	
14	Բնության նկատմամբ ապօրինի անտառհատումների և բնապահպանական հիմնախնդիրներին ուղղված միջոցառումների կազմակերպում	մշտական	Մարզի տարածք	ՀԿ-ներ, անտառապահներ, ուսանողներ, աշակերտներ	Համայնքապետարաններ, ՀԿ-ներ, անտառտնեսություններ, հանքարդյունաբերողներ,ուսանողներ, աշակերտներ	Համայնքների ղեկավարներ, անտառտնեսությունների և հանքամշակման ձեռնարկությունների ղեկավարներ, Ս.Գևորգյան	
15	Աղբավայրերի շահագործման	մշտական	Մարզի համայնքային աղբավայրեր	Համայնքապետարաններ, ՀԿ-ներ	Համայնքապետարաններ,	Համայնքների ղեկավարներ,	

	աշխատանքների կազմակերպում				մասնագիտացված կազմակերպություններ, ՀԿ-ներ	մասնագիտացված կազմակերպություններ Ս. Գևորգյան Մ. Ղալումյան	
16	Հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում շրջակա միջավայրը մաքուր պահելու թեմաներով հանդեսների կազմակերպում	2017թ. 2-րդ և 4-րդ եռամսյակ	Մարզի տարածք	Մանկավարժներ, աշակերտներ, սաներ	Մանկավարժներ, աշակերտներ, սաներ	Կ.Նազարյան Ս.Գևորգյան	Բեմ ակա նացվ ած միջո ցառո ումներ
17	Դպրոցներում՝ 8-12 դասարաններում <<Մաքուր Հայաստան>> թեմայով շարադրությունների մրցույթի կազմակերպում	2017թ.սեպտեմբեր	Մարզի տարածք	Մանկավարժներ, աշակերտներ	Դպրոցների տնօրեններ	Կ.Նազարյան	

*Կապված եղանակային պայմանների հետ ծրագրով նախատեսված միջոցառումները անհրաժեշտության դեպքում կարող են ունենալ ժամկետի փոփոխություն:

<< Տավուշի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար

Ս. Դավթյան